ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ «10» հունիսի 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. չորրորդ նստաշրջանի հունիսի 10-ին ժամը՝ 12:00-ին հրավիրված հերթական նիստը:
Նիստի հեռարձակումը տեխնիկական խնդիրների պատճառով հեռարձակվում է համայնքապետարանի պաշտոնական ֆեյսբուքյան էջով:
Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասներկու անդամներ, բացակա էին Կարլեն Վերմիշյանը, Աննա Գրիգորյանը և Անի Սերոբյանը:

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Ա. Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղի էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

- **ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Ավագանին որոշեց՝ Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի չորրորդ նստաշրջանի հերթական՝ հունիսի 10-ի նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի չորրորդ նստաշրջանի հերթական նիստի՝ հունիսի 10-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերը հաստատելու մասին:
3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի թիվ 11-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4) Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համագործակցությամբ կազմակերպված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու մասին:
5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

Ավագանու անդամները Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի զինանշանը հաստատելու մասին օրակարգի հարցը առաջարկեցին տեղափոխել հաջորդ նիստին:

12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 34-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Է. Մելիքսեթյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքում 2024 թվականի հունիսի 04-ին կայացած հանրային լսումների արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

<u>Ավագանին որոշեց</u>՝ Տալ հավանություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2025 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին Լոռի Բերդ համայնքի մասնակցության առաջարկությանը:

Հաստատել՝ Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

12 կողմ, 0 կողմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 35-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետով, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի մայիսի 30-ի թիվ ԳՍ/15.4/16868-2024 հանձնարարականի պահանջներով՝

Ավագանին որոշեց՝ «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի թիվ 11-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

12 կողմ, 0 կողմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 36-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Մ. Հովսեփյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1 հոդվածով՝

Ավագանին որոշեց՝ Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը համաձայն՝ հավելվածի:

12 կողմ, 0 կողմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 37-Լ/

Լսեցին՝

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԳՄՀԸ/GIZ) և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Է. Մելիքսեթյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 42-րդ կետով, 13-րդ հոդվածի 10-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքում 2024 թվականի հունիսի 04-ին կայացած հանրային լսումների արդյունքները՝

1. **<u>Ավագանին որոշեց՝</u>** Տալ հավանություն՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ և Սվերդլով բնակավայրերի մանկապարտեզների շենքերի տանիքներին (յուրաքանչյուրին 5 կՎտ) ֆոտոոլտային կայաններ տեղադրելու նպատակով՝ Լոռի Բերդ համայնքին մասնակցելու՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համագործակցությամբ «ԵՄ-ն հայկական համայնքներում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի համար» ծրագրի շրջանակներում մեկնարկած «Փոքր մասշտաբի վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության միջոցառումներ հանրային շենքերում և պիլոտային մեկուսացում տնային տնտեսությունների մակարդակում» (առաջին փուլ) ծրագրին և ստանալ դրամաշնորհ: Ծրագրի իրականացման նպատակով Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի բյուջեից կատարել ներդրում՝ ծրագրի ընդհանուր արժեքի 25%-ի չափով:

12 կողմ, 0 կողմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 38-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ և ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<u>Զեկ./Արայիկ Ներսիսյան/</u>

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

<u>Ավագանին որոշեց՝</u> Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2024 թվականի հունիսի 25-ը, ժամը՝ 12:00-ն:

12 կողմ, 0 կողմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 39-Ա/

Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մարգարիտա Հովսեփյանը ներկայացրեց 2024թ. վճարված սոցիալական օգնությունների և դրամական մրցանակների մասին հաղորդում՝ 11.05.2024-10.06.2024թթ ժամանակահատվածի դրությամբ.

2024թ. վճարված սոց վճարների և դրամական մրցանակների մասին հաղորդում

Սոց. վճարի տեսակը	11.05.2024- 10.06.2024		2024թ.տարեսկզբից	
	Սոց. Վճար ստացած անձանց քանակը	Գումարը /հազ.դրամ/	Սոց. Վճար ստացած անձանց քանակը	Գումարը /հազ.դրամ/
Երեխայի ծննդյան կապակցությամբ	**3**	110.0	23	810.0
հուղարկավորության կազմակերպման համար	**6**	240.0	28	1,120.0
սոցիալական հատուկ արտոնություններ, այդ թվում	**44**	470	93	1770
նորակոչիկ զինվորի երդման արարողությանը մասնակցելու համար			6	240.0
Հավաքների մասնակցության համար	3	60.0	39	780.0
Այլ			6	240.0
Մայիսի 9-ի կապակցությամբ			1	100.0
Վերջին զանգի կապակցությամբ	41	410.0	41	410.0
Ընդամենը սոց վճար	**53**	**820.0**	144	3,700.0
Այլ մշակութային կազմակերպություններ նախահաշվով վճարված դրամական մրցանակներ			7	280.0

Նիստի փակում:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի

Վարդումյան Հայկ Վազգենի

Պապյան Հարություն Միշիկի

Պապիկյան Վահրամ Ռոմիկի

Ներսեսյան Իրինա Վազգենի

Չիբուխչյան Արման Հրաչիկի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Սիմոնյան Անահիտ Բաբկենի

Ասրյան Աննա Տիգրանի

Շահնազարյան Թամարա Էդիկի

Գևորգյան Միշիկ Մարտիկի

Չատինյան Վանո Վալերի

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արայիկ Ներսիսյան ----------

Նիստը արձանագրեց՝ Անի Մարտիրոսյան ----------

Կնք